ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 85-Ա 06 մարտի 2023 թ.

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 7-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

***որոշում եմ***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցության նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի հանրապետության կողմից սանձազերծած ագրեսիայի ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզի 4 զոհված զինծառայողների ընտանիքներին հատկացնել 800000/ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ, յուրաքանչյուրին 200000/երկու հարյուր հազար/-ական ՀՀ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ՖՏՏՀ վարչությանը՝ սահմանված կարգով տասնօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

06.03.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503 ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ք.Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2023 թ. մարտի 6 - ի
N 85-Ա որոշման

# Ց Ո Ւ Ց Ա Կ
## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

| հ/հ | ազգանուն անուն | հասցե | հատկացված գումարի չափը, դրամով | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1. | Հովհաննիսյան Լիանա Աշոտի | Վարդենիս համայնք, Փոքր Մասրիկ | 200000/երկու հարյուր հազար/ | Սոցիալապես անապահով |
| 2. | Մանուկյան Ջուլետա Վլադիմիրի | Գավառ համայնք, Նորատուս բնակավայր | 200000/երկու հարյուր հազար/ | Սոցիալապես անապահով |
| 3. | Կարապետյան Սոս Ժորայի | Վարդենիս | 200000/երկու հարյուր հազար/ | Սոցիալապես անապահով |
| 4. | Կարապետյան Կարապետ Ջավենի | Մարտունի համայնք, Արծվանիստ բնակավայր | 200000/երկու հարյուր հազար/ | Սոցիալապես անապահով |
| Ընդամենը | | | 800000/ութ հարյուր հազար/ | |

06.03.2023

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
Ս.ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող՝ՖՍՏՋ Վարչություն
Ա.Բադեյան